ՀԿԴ/0137/01/22
(ՍԴ3/0173/01/26)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8 հունիսի 2026 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ՀԿԴ/0137/01/22 (ՍԴ3/0173/01/26) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2026 թվականի մայիսի 14-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2019 թվականի դեկտեմբերի 11-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ 90863618 (ՍԴ1/0148/01/19) քրեական գործն ըստ մեղադրանքի՝

- Աշոտ Գարեգինի Կոստանյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 375-րդ հոդվածի 1-ին մասով, 2 (երկու) դրվագ 358.1-րդ հոդվածի 1-ին մասով,

- Արթուր Հրաչյայի Շահնազարյանի՝ 3 (երեք) դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 359-րդ հոդվածի 3-րդ մասով, 2 (երկու) դրվագ 359-րդ հոդվածի 1-ին մասով, 365-րդ հոդվածի 1-ին մասով,

- Եղիշե Միերի Մուսինյանի՝ 2 (երկու) դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով,

- Արգամ Աղվանի Մկրտչյանի՝ 2 (երկու) դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով,

- Սամվել Մելսիկի Առաքելյանի՝ 2 (երկու) դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով,

- Հովհաննես Կամոյի Ներսիսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով, 2 (երկու) դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով,

- Ահարոն Սլավիկի Սահակյանի՝ 2 (երկու) դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով:

1.1. 2019 թվականի դեկտեմբերի 20-ին թիվ ՍԴ1/0148/01/19 քրեական գործն ընդունվել է դատավոր Գ.Գասպարյանի վարույթ, և 2020 թվականի հունվարի 8-ին որոշում է կայացվել դատական քննություն նշանակելու մասին:

1.2. 2022 թվականի մայիսի 2-ին թիվ ՍԴ1/0148/01/19 քրեական գործը վերաբաշխվել է դատավոր Վ.Ջիվանյանին, և 2022 թվականի մայիսի 17-ին որոշում է կայացվել քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

1.3. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 16-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0148/01/19 քրեական գործն ըստ ընդդատության Հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին:

2. Հակակոռուպցիոն դատարանը (դատավոր Տ.Դավթյան) 2022 թվականի հոկտեմբերի 12-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0137/01/22 (ՍԴ1/0148/01/19) քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

2.1. Հակակոռուպցիոն դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 11-ի որոշմամբ Եղիշե Մուսինյանի նկատմամբ՝ 2 (երկու) դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

2.2. Հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 28-ի որոշումներով Արգամ Մկրտչյանի նկատմամբ՝ 2 (երկու) դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով, Աշոտ Կոստանյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով, 2 (երկու) դրվագ ՀՀ քրեական

օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով, Սամվել Առաքելյանի նկատմամբ՝ 2 (երկու) դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

2.3. Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ Ահարոն Սահակյանի նկատմամբ՝ 2 (երկու) դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով, Հովհաննես Ներսիսյանի նկատմամբ՝ 2 (երկու) դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով, Արթուր Շահնազարյանի նկատմամբ՝ 2 (երկու) դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 2 (երկու) դրվագ 359-րդ հոդվածի 1-ին մասով, 365-րդ հոդվածի 1-ին մասով իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

2.4. Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի մայիսի 15-ի որոշմամբ Արթուր Շահնազարյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով, Հովհաննես Ներսիսյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել և թիվ ՀԿԴ/0137/01/22 վարույթը կարճվել է՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

3. Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի մայիսի 15-ի որոշման դեմ դատախազ Է.Աղաբալյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի ուսումնասիրության արդյունքում ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը (նախագահող՝ Մ.Մակյան, դատավորներ՝ Ժ.Մելիքսեթյան, Կ.Ամիրյան) 2025 թվականի հուլիս 11-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0137/01/22 քրեական գործն ըստ առարկայական ընդդատության ՀՀ վերաքննիչ քրեական դատարան փոխանցելու մասին:

4. 2025 թվականի հուլիսի 25-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0137/01/22 քրեական վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին՝ առարկայական ընդդատության հարցը լուծելու համար:

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի՝ 2025 թվականի օգոստոսի 13-ի գրությամբ թիվ ՀԿԴ/0137/01/22 քրեական վարույթը վերադարձվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:

4.1. Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ Ա.Շահնազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով, Հ.Ներսիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի մայիսի 15-ի որոշումը բեկանվել և վարույթը փոխանցվել է նույն դատարան՝ նոր քննության, իսկ Ա.Շահնազարյանին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով քրեական պատասխանատվությունից ազատելու մասով թողնվել է անփոփոխ:

5. Հակակոռուպցիոն դատարանը (դատավոր Մ.Մոսինյան) 2026 թվականի մարտի 6-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0137/01/22 քրեական գործի վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

5.1. Հակակոռուպցիոն դատարանը 2026 թվականի ապրիլի 18-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0137/01/22 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

6. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Գ.Գասպարյան) 2026 թվականի մայիսի 14-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0173/01/26 (ՀԿԴ/0137/01/22) քրեական վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին՝ առարկայական ընդդատության հարցը լուծելու համար:

7. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի մայիսի 29-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

8. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2025 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի մայիսի 15-ի որոշումը բեկանել և վարույթը փոխանցել է նույն դատարան՝ նոր քննության, արձանագրելով հետևյալը. *«(…) Անդրադառնալով վարույթը Հակակոռուպցիոն դատարան փոխանցելուն, ապա Վերաքննիչ դատարանն այս մասով արձանագրում է, որ սույն քրեական գործն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին, ի դեպ ՀՀ վերաքննիչ*

հակակոռուպցիոն դատարանը նույնպես այս մասով իր կողմից կայացված համապատասխան որոշմամբ նշել է, որ հենց Հակակոռուպցիոն դատարանին է ընդդատյա առաջին ատյանի դատարանում սույն գործի քննությունը:

Հընթացս հարկ է նշել, որ Վերաքննիչ դատարանը սույն գործի վերանայման առարկայական ընդդատության հարցի մասով արդեն իսկ ձեռնարկել է հնարավոր բոլոր միջոցները (…) և գործի քննությունն իրականացրել է այն փաստի հաշվառմամբ, որ առկա է ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի կողմից ըստ առարկայական ընդդատության սույն գործը ՀՀ վերաքննիչ քրեական դատարան փոխանցելու վերաբերյալ չվերացված որոշում (…), հակառակ մուրեցումը գործի քննությունը կդարձներ փակուղի և կվրանգեր արդարադատության շահը: Ի դեպ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ գլուխը, այնքանով որքանով չի նախատեսում վերաքննիչ դատարանների միջև գործերի առարկայական ընդդատության վեճի լուծման մեխանիզմներ, չի հանդիսանում պոզիտիվ իրավունքում այնպիսի բաց, որը հանարավոր չէ հաղթահարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործիքակազմով և չի կարող հանգեցնել իրավական փակուղու (…): Հետևաբար վերը նշված բացը իրավական անորոշություն գնահատելու և համապատասխան գործիքակազմ կիրառելու իրավաչափ հիմքերը փվյալ դեպքում բացակայում են: (…)»[1]*:*

9. Հակակոռուպցիոն դատարանը 2026 թվականի ապրիլի 18-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը փաստում է, որ Աշոտ Գարեգինի Կոստանյանի, Արգամ Աղվանի Մկրտչյանի, Սամվել Մելսիկի Առաքելյանի և Ահարոն Սլավիկի Սահակյանի նկատմամբ, ի թիվս այլնի, հանրային քրեական հետապնդում է հարուցվել նաև 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով, որը նույն օրենսգրքի հավելված 6-ի համաձայն՝ կոռուպցիոն հանցանք է, որն էլ հենց հիմք է հանդիսացել թիվ ՍԴ1/0148/01/19 քրեական գործն ըստ ընդդատության ՀՀ հակակոռուպցիոն դատարան ուղարկելու համար:*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 23, թերթեր 90-102:

Դատարանն արձանագրում է, որ թիվ ՀԿԴ/0137/01/22 քրեական գործով քննվել և քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշում կայացվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանի կողմից, քանի որ Աշոտ Գարեգինի Կոստանյանին, Արգամ Աղվանի Մկրտչյանին, Սամվել Մելսիկի Առաքելյանին և Ահարոն Սլավիկի Սահակյանին մեղսագրվել է այդ թվում կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցանք: Մինչդեռ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի համապատասխան որոշումներով վերջիններիս նկատմամբ հարուցված քրեական հետապնդումները դադարեցվել են, այդ որոշումները չեն բողոքարկվել, մրել են օրինական ուժի մեջ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի մայիսի 15-ի որոշման վերանայման արդյունքում գործը նոր քննության է ուղարկել՝ սահմանելով գործի քննության ծավալ, այն է՝ Արթուր Հրաչյայի Շահնազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով և Հովհաննես Կամոյի Ներսիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցված մեղադրանքների մասով: Միաժամանակ Դատարանն արձանագրում է, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով նախատեսված ենթադրյալ հանցանքների վերաբերյալ գործերն ընդդատյա են մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածը ներառված չէ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 6-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների ցանկում, հետևաբար Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0137/01/22 քրեական գործը պետք է ըստ ընդդատության փոխանցել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Ինչ վերաբերում է հանրային մեղադրողի այն դիրքորոշմանը, որ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ ընդդատության կանոնների վերաբերյալ արտահայտած դիրքորոշման համաձայն՝ եթե տվյալ վարույթով մեղադրյալներին մեղսագրված ենթադրյալ հանցագործություններից մեկը ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 6-ով նախատեսված կոռուպցիոն հանցանք է, ապա քրեական վարույթը ենթակա է քննության բացառապես համապատասխան մասնագիտացում ունեցող

հակակոռուպցիոն դատարանի կողմից անգամ այն դեպքում, երբ կոռուպցիոն հանցանքի մասով քրեական հետապնդումը դադարեցվում է, ապա Դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը սույն պարագայում կիրառելի չէ: Դատարանի նման դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից քննարկման առարկա են դարձվել այն իրավիճակները, երբ իր վարույթում քննվող գործով դատարանը կոռուպցիոն մեղադրանքով քրեական հետապնդումը դադարեցրել է (կամ մաս է անջատել), և ոչ կոռուպցիոն մեղադրանքով մասն ուղարկել ընդհանուր իրավասության դատարան, մինչդեռ սույն դեպքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, բեկանելով առաջին ատյանի դատական ակտը, փոխանցել է այն նոր քննության՝ սահմանելով գործի քննության նոր ծավալ, այն է՝ Արթուր Հրաչյայի Շահնազարյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով և Հովհաննես Կամոյի Ներսիսյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցված մեղադրանքներով, հետևաբար առաջին ատյանի դատարանը նոր քննությունը պետք է իրականացնի ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի սահմանած ծավալով՝ դուրս չգալով դրանց սահմաններից:

Վերը շարադրվածից բացի, Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին 2025 թվականի մայիսի 15-ի որոշման իրավաչափությունն ստուգվել է ոչ թե ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն, այլ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից, ինչը ևս մեկ անգամ հաստատում է այն հանգամանքը, որ սույն քրեական գործն այլևս ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին: (…)»[2]:

10. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի մայիսի 14-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն քրեական վարույթն ի սկզբանե եղել է նաև*

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 24, թերթեր 52-61:

կոոուպցիոն՚ հանցանքի վերաբերյալ, մասնավորապես՝ սույն քրեական վարույթով Աշոտ Գարեգինի Կոստանյանի, Արգամ Աղվանի Մկրտչյանի, Սամվել Մելսիկի Առաքելյանի և Ահարոն Սլավիկի Սահակյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է իրականացվել, ի թիվս այլնի, նաև ՀՀ 18.04.2003թ. քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով, որը ներառված է ՀՀ 18.04.2003թ. քրեական օրենսգրքի թիվ 6 հավելվածով նախատեսված կոոուպցիոն հանցանքների ցանկում, ավելին՝ այն համապատասխանում է ՀՀ 05.05.2021թ. քրեական օրենսգրքի 549-րդ հոդվածի 1-ին մասին, որն էլ իր հերթին ներառված է ՀՀ 05.05.2021թ. քրեական օրենսգրքի թիվ 1 հավելվածով նախատեսված կոոուպցիոն հանցանքների ցանկում: Հետևաբար՝ Դատարանի գնահատմամբ նշված հանգամանքն արդեն իսկ բավարար է հանգելու այն ողջամիտ հետևության, որ սույն քրեական վարույթն ընդդատյա է ՀՀ հակակոոուպցիոն դատարանին:

Միևնույն ժամանակ Դատարանն արձանագրում է, որ թեպետ դատական քննության ընթացքում ՀՀ հակակոոուպցիոն դատարանի՝ 28.08.2023թ. և 21.10.2024թ. որոշումներով՝ Արգամ Աղվանի Մկրտչյանի նկատմամբ ՀՀ 18.04.2003թ. քրեական օրենսգրքի 2 (երկու) դրվագ 375-րդ հոդվածի 1-ին մասով, Աշոտ Գարեգինի Կոստանյանի նկատմամբ ՀՀ 18.04.2003թ. քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով, Սամվել Մելսիկի Առաքելյանի նկատմամբ ՀՀ 18.04.2003թ. քրեական օրենսգրքի 2 (երկու) դրվագ 375-րդ հոդվածի 1-ին մասով և Ահարոն Սլավիկի Սահակյանի նկատմամբ ՀՀ 18.04.2003թ. քրեական օրենսգրքի 2 (երկու) դրվագ 375-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է, սակայն Դատարանի գնահատմամբ նշված հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ սույն վարույթն այլևս կոոուպցիոն հանցանքի վերաբերյալ չդիտելու և դրա ընդդատությունը փոխելու համար:

Մինչդեռ ՀՀ հակակոոուպցիոն դատարանը (...) հանգել է այն հետևության, որ սույն քրեական վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, որպիսի մոտեցումը Դատարանի համար ընդունելի չէ: Ավելին՝ առանձնակի ուշադրության է արժանի հատկապես այն հանգամանքը, որ ՀՀ հակակոոուպցիոն դատարանը շեշտադրում է կատարել սույն քրեական վարույթը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 17.12.2025թ. որոշմամբ նոր քննության

փոխանցված լինելու հանգամանքի վրա (...) մինչդեռ նման պայմաններում տրամաբանական հարց է առաջանում, թե ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 15.05.2025թ. որոշումը կայացված չլինելու դեպքում վարույթն արդյո՞ք չէր իրականացվելու Արթուր Շահնազարյանի և Հովհաննես Ներսիսյանի նկատմամբ և միայն նրանց՝ համապատասխանաբար ՀՀ 18.04.2003թ. քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով ու 359-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ 18.04.2003թ. քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով ներկայացված մեղադրանքներով, և այդ դեպքում արդյո՞ք փոխվելու էր վարույթի ընդդատությունը: Համենայն դեպս, մինչ նշված որոշումը կայացվելը, Ա.Կոստանյանի նկատմամբ ՀՀ 18.04.2003թ. քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով, Ա.Մկրտչյանի նկատմամբ ՀՀ 18.04.2003թ. քրեական օրենսգրքի 2 (երկու) դրվագ 375-րդ հոդվածի 1-ին մասով, Ս.Առաքելյանի նկատմամբ ՀՀ 18.04.2003թ. քրեական օրենսգրքի 2 (երկու) դրվագ 375-րդ հոդվածի 1-ին մասով և Ա.Սահակյանի նկատմամբ ՀՀ 18.04.2003թ. քրեական օրենսգրքի 2 (երկու) դրվագ 375-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումն արդեն դադարեցված է եղել, սակայն վարույթը ՀՀ հակառուպցիոն դատարանում շարունակվել է:

Ինչ վերաբերում է ՀՀ հակառուպցիոն դատարանի այն պատճառաբանությանը, թե. «(...) ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին 2025 թվականի մայիսի 15-ի որոշման իրավաչափությունն ստուգվել է ոչ թե ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն, այլ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից, ինչը ևս մեկ անգամ հաստատում է այն հանգամանքը, որ սույն քրեական գործն այլևս ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին: (...)», ապա նման պայմաններում էլ ՀՀ հակառուպցիոն դատարանը հաշվի չի առել այն հանգամանք, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 17.12.2025թ. որոշմամբ՝ թիվ ՀԿԴ/0137/01/22 քրեական վարույթը նոր քննության համար փոխանցվել է նույն, այսինքն՝ ՀՀ հակառուպցիոն դատարանին:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Դատարանը գտնում է, որ վերը նշված հանգամանքներն իրապես չէին կարող հիմք հանդիսանալ վարույթի առարկայական ընդդատության հարցը վերստին քննարկելու և վարույթն ըստ ընդդատության Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին

փոխանցելու համար: Ավելին՝ Դատարանի գնահատմամբ նման մուրեցումը ոչ միայն չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի իրավակարգավորումներից, այլ նաև արդարադատության շահից, քանի որ նման մուրեցման դեպքում կստացվի, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանն ընդդատության կանոնների պահպանմամբ ստանձնած՝ միաժամանակ և՛ կոռուպցիոն, և՛ ոչ կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթով դատական քննության որոշակի փուլում կոռուպցիոն հանցանք(ներ)ով քրեական հետապնդումը դադարեցնելուց հետո, այդ վարույթն ըստ ընդդատության պետք է փոխանցի այլ դատարանի, ինչը, սակայն, Դատարանի գնահատմամբ կհանգեցնի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ արդար դատաքննության և դրանից ածանցվող մի շարք այլ իրավունքների, այդ թվում՝ նաև ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման:

(…)

Այսպիսով՝ նշված հիմնավորումներով Դատարանը համաձայն չէ մեղադրյալներ Արթուր Հրաչյայի Շահնազարյանի և Հովհաննես Կամոյի Ներսիսյանի վերաբերյալ՝ ՀՀ 18.04.2003թ. քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով, թիվ ՍԴ3/0173/01/26 քրեական վարույթի առարկայական ընդդատությանը, ուստի՝ հաշվի առնելով արդար դատաքննության և դրանից ածանցվող մի շարք այլ իրավունքների կարևորությունն ու դրանց արդյունավետ իրացումն ապահովելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ելնելով արդարադատության շահից՝ Դատարանը հանգում է այն եզրահանգման, որ սույն քրեական վարույթը պետք է ուղարկել Վճռաբեկ դատարան՝ դրա առարկայական ընդդատության հարցը վերջնականապես լուծելու համար: (…)»[3]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

11. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 25, թերթեր 5-19:

հետևությունն այն մասին, որ թիվ ՀԿԴ/0137/01/22 (ՍԴ3/0173/01/26) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

12. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

13. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

13.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

14. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[6]:

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, ինչպես նաև դատական երաշխիքների բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ, այդ թվում՝ դատական երաշխիքների վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այդ որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

16. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- մեղադրյալներ Ա.Կոստանյանի, Ա.Մկրտչյանի, Ս.Առաքելյանի, Ա.Սահակյանի, Ե.Մուսինյանի, Հ.Ներսիսյանի և Ա.Շահնազարյանի վերաբերյալ կոռուպցիոն

վարույթը 2022 թվականի հոկտեմբերի 12-ից քննվել է Հակակոռուպցիոն դատարանում,

- դատական քննության ընթացքում Հակակոռուպցիոն դատարանի կողմից տարբեր ժամանակահատվածներում կայացված որոշումներով մեղադրյալներ Ե.Մուսինյանի, Ա.Մկրտչյանի, Ա.Կոստանյանի, Ս.Առաքելյանի և Ա.Սահակյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով, իսկ մեղադրյալներ Հ.Ներսիսյանի և Ա.Շահնազարյանի նկատմամբ նույն հիմքով քրեական հետապնդումը դադարեցվել է 2025 թվականի մայիսի 15-ի որոշմամբ, և թիվ ՀԿԴ/0137/01/22 քրեական վարույթը կարճվել է,

- Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի մայիսի 15-ի որոշման դեմ դատախազի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի հիման վրա ստանալով թիվ ՀԿԴ/0137/01/22 քրեական վարույթը, ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի հուլիսի 11-ին որոշում է կայացրել այն ըստ առարկայական ընդդատության ՀՀ վերաքննիչ քրեական դատարան փոխանցելու մասին,

- ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում 2025 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի մայիսի 15-ի որոշումը բեկանել է և վարույթը փոխանցել նույն դատարան՝ նոր քննության, արձանագրելով, որ թիվ ՀԿԴ/0137/01/22 քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին[7]:

- Հակակոռուպցիոն դատարանը, փաստելով, որ թիվ ՀԿԴ/0137/01/22 քրեական գործով մեղադրյալներ Ա.Կոստանյանի, Ա.Մկրտչյանի, Ս.Առաքելյանի և Ա.Սահակյանի նկատմամբ կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցանքներով հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից գործը նոր քննության է ուղարկվել Ա.Շահնազարյանի և Հ.Ներսիսյանի նկատմամբ ոչ կոռուպցիոն բնույթի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցված մեղադրանքների ծավալով, գտել է, որ սույն

[7] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

վարույթն ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Հակակոռուպցիոն դատարանն արձանագրելով նաև, որ Հակակոռուպցիոն դատարանի՝ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին 2025 թվականի մայիսի 15-ի որոշման իրավաչափությունը ստուգվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից, գտել է, որ վերոգրյալով հաստատվում է, որ սույն վարույթն այլևս ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին[8]:

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն արձանագրելով, որ թիվ ՀԿԴ/0137/01/22 քրեական վարույթն ի սկզբանե եղել է կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ, գտել է, որ մեղադրյալներ Ա.Կոստանյանի, Ա.Մկրտչյանի, Ս.Առաքելյանի և Ա.Սահակյանի նկատմամբ կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցանքներով հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու հանգամանքը չէր կարող հիմք հանդիսանալ սույն վարույթի առարկայական ընդդատության հարցը վերստին քննարկելու և վարույթն ըստ ընդդատության Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու համար:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի գնահատմամբ նման մոտեցումը ոչ միայն չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի իրավակարգավորումներից, այլ նաև արդարադատության շահից, հաշվի առնելով, որ նման մոտեցումը կհանգեցնի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ արդար դատաքննության և դրանից ածանցվող մի շարք այլ իրավունքների, այդ թվում՝ նաև ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման:

Բացի այդ, Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նշել է, որ Հակառուպցիոն դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը,

[8] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը սույն վարույթը նոր քննության է փոխանցել Հակակոռուպցիոն դատարան[9]:

18. Նախորդ կետում նշված հանգամանքների վերլուծության արդյունքում հարկ է արձանագրել, որ Հակակոռուպցիոն դատարանի կողմից **ընդդատության կանոնների պահպանմամբ** վարույթ ընդունված **կոռուպցիոն հանցանք(ներ)ի վերաբերյալ** քրեական գործի քննության ընթացքում մեղադրյալ(ներ)ին վերագրվող կոռուպցիոն բնույթի հանցանք(ներ)ով հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու հանգամանքը **վարույթի առարկայական ընդդատությունը փոխելու հիմք հանդիսանալ չի կարող**:

Հետևաբար, տվյալ պարագայում Հակակոռուպցիոն դատարանի կողմից **ընդդատութան կանոնների պահպանմամբ թիվ ՀԿԴ/0137/01/22 քրեական գործը վարույթ ընդունելուց հետո՝ գործի հետագա քննության ընթացքում** մեղադրյալներ Ա.Կոստանյանի, Ա.Մկրտչյանի, Ս.Առաքելյանի և Ա.Սահակյանի նկատմամբ կոռուպցիոն բնույթի հանցանքներով հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու հանգամանքը չէր կարող հիմք հանդիսանալ վարույթի ընդդատությունը փոխելու և այն ըստ առարկայական ընդդատության Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու համար: Նշված մոտեցումը ոչ միայն չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի իրավակարգավորումներից, այլև չի ծառայում արդարադատության շահին:

Վերոգրյալի հետ մեկտեղ հարկ է նշել, որ սույն վարույթով առկա է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 17-ի չբողոքարկված և օրինական ուժի մեջ մտած որոշումը, որով **իրավաչափորեն արձանագրվել է, որ սույն վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին,** որի արդյունքում վարույթը փոխանցվել է Հակակոռուպցիոն դատարան՝ նոր քննության:

19. Վերոշարադրյալի հաշվառմամբ, գտնում ենք, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ

[9] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

ՀԿԴ/0137/01/22 (ՍԴ3/0173/01/26) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին, հիմնավոր է:

20. Հետևաբար, գտնում ենք, որ թիվ ՀԿԴ/0137/01/22 (ՍԴ3/0173/01/26) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Արթուր Հրաչյայի Շահնազարյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով և Հովհաննես Կամոյի Ներսիսյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով թիվ ՀԿԴ/0137/01/22 (ՍԴ3/0173/01/26) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ